

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՂԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Ընդունեցեք Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հոտի և անձամբ իմ սրտագին շնորհավորանքները Ձեր կյանքի նշանակալից իրադարձության՝ Ձեր ծննդյան ութսունամյակի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելու առթիվ: Այդ բարձր պարգևն ըստ արժանվույն է գնահատում Ձեր երկարատև հայրենասիրական ու խաղաղասիրական ծառայությունները: Տերը թող ամրապնդի Ձեր հոգևոր և մարմնական ուժերը: Աղոթելով մաղթում եմ Ձերդ Սրբությանը քաջառողջություն՝ նոր եռանդով դրսևորելու եկեղեցական ղեկավարի, հայրենասերի և խաղաղասերի Ձեր ակնառու հատկությունները:

Խորին հարգանք և անխախտ սիրով ի Քրիստոս՝

ՊԻՄԵՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

Մոսկվա,
23 սեպտեմբերի 1988 թ.



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Վրաց Եկեղեցու և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ նշանակալից հոբելյանի՝ Ձեր ծննդյան ութսունամյակի և կառավարական բարձր պարգևի արժանանալու առթիվ: Ձեր գործունեությունը աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրական համագործակցության ասպարեզում մեր ժողովուրդը բարձր է գնահատում: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, հաջողություններ Ձեր պատրիարքական ծառայության մեջ, իսկ եղբայրական հայ ժողովրդին՝ խաղաղություն և հետագա բարգավաճում:

Եղբայրական սիրով՝

ԻԼԻԱ Բ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թբիլիսի,
24 սեպտեմբերի 1988 թ.